

Կ-385¹-21.11.2019,16.01.2020-ՊԻ-011

**«ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Հոդված 1. «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-263-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետում՝

ա. «ա» ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. ապահովված անձի (պարտատիրոջ) տվյալները՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, իրավաբանական անձի գրանցման համարը և գտնվելու վայրը, իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրի հասցեն, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը».

գ. «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. պարտապանի տվյալները՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, իրավաբանական անձի գրանցման համարը և գտնվելու վայրը, իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրի հասցեն, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը».

դ. «դ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

ե. «ե» ենթակետը «մասին» բառից առաջ լրացնել «տեսակի» բառով.

զ. «զ» ենթակետում «ժամկետները» բառից հետո լրացնել «, ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանված լինելու դեպքում՝ պայմանագրով սահմանված ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը (առկայության դեպքում)» բառերով, իսկ «որոշիչ»

բառը փոխարինել «իսկ ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի որոշակի նկարագրություն սահմանված լինելու դեպքում՝ որոշիչ» բառերով.

է. «Ժ» ենթակետից հանել «նոտարական» բառը, իսկ «նոտարին հասցեագրած» բառերը փոխարինել «գրանցում կատարելու համար ներկայացվող» բառերով.

2) 1-ին մասի 2-րդ կետում «անդորրագրի հաստատված վճարման հանձնարարականի բնօրինակը» բառերը փոխարինել «անդորրագիրը» բառով.

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 4-րդ մասում «Այն դեպքերում, երբ հնարավոր է որոշիչ ճշգրիտ տվյալների միջոցով որոշակիացնել շարժական գույքը, ապա» բառերը փոխարինել «Ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի որոշակի նկարագրություն սահմանված լինելու դեպքում» բառերով, իսկ «այդ» բառը փոխարինել «շարժական գույքի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանված լինելու դեպքում՝ ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ նշում համապատասխանաբար ողջ գույքի կամ գույքի առանձին տեսակների կամ որևէ հատկանիշներով պայմանավորված խմբի մասին, ինչպես նաև պայմանագրով սահմանված ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը (առկայության դեպքում), իսկ ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի որոշակի նկարագրություն սահմանված լինելու դեպքում՝ գույքի որոշիչ հատկանիշները (տվյալները).».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) գրանցման համարը:»:

Հոդված 4. Օրենքի 18-րդ հոդվածում 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասությամբ.

«Ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանված լինելու և ապահովված իրավունքի առարկայի օտարման դեպքում ապահովված իրավունքի վերաբերյալ գրանցումը շարունակում է ուժի մեջ մնալ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225.1-ին հոդվածի 6.3-րդ մասով նախատեսված կանոններին համապատասխան:»:

Հոդված 5. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «որը ենթակա է նոտարական վավերացման» բառերը փոխարինել «եթե համաձայնություն ներկայացնելու պահանջը նախատեսված է պայմանագրով»:

Հոդված 6. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 22-րդ հոդվածի 1-ին մասը «գույքի համարը» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարված գրանցումների նկատմամբ:

**«ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Հոդված 1. «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-263-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետում՝

ա. «ա» ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. ապահովված անձի (պարտատիրոջ) տվյալները՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, իրավաբանական անձի գրանցման համարը և գտնվելու վայրը, իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրի հասցեն, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը».

գ. «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. պարտապանի տվյալները՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, իրավաբանական անձի գրանցման համարը և գտնվելու վայրը, իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրի հասցեն, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը».

դ. «դ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

ե. «ե» ենթակետը «մասին» բառից առաջ լրացնել «տեսակի» բառով.

զ. «զ» ենթակետում «ժամկետները» բառից հետո լրացնել «, ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանված լինելու դեպքում՝ պայմանագրով սահմանված ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը [\(առկայության դեպքում\)](#)» բառերով, իսկ «որոշիչ» բառը փոխարինել «իսկ ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի որոշակի նկարագրություն սահմանված լինելու դեպքում՝ որոշիչ» բառերով.

է. «Ժ» ենթակետից հանել «նոտարական» բառը, իսկ «նոտարին հասցեագրած» բառերը փոխարինել «գրանցում կատարելու համար ներկայացվող» բառերով.

2) 1-ին մասի 2-րդ կետում «անդորրագրի հաստատված վճարման հանձնարարականի բնօրինակը» բառերը փոխարինել «անդորրագիրը» բառով.

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 4-րդ մասում «Այն դեպքերում, երբ հնարավոր է որոշիչ ճշգրիտ տվյալների միջոցով որոշակիացնել շարժական գույքը, ապա» բառերը փոխարինել «Ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի որոշակի նկարագրություն սահմանված լինելու դեպքում» բառերով, իսկ «այդ» բառը փոխարինել «շարժական գույքի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում`

1) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանված լինելու դեպքում` ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագիրը, այդ թվում` նշում համապատասխանաբար ողջ գույքի կամ գույքի առանձին տեսակների կամ որևէ հատկանիշներով պայմանավորված խմբի մասին, ինչպես նաև պայմանագրով սահմանված ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը (առկայության դեպքում), իսկ ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի որոշակի նկարագրություն սահմանված լինելու դեպքում` գույքի որոշիչ հատկանիշները (տվյալները).».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) գրանցման համարը:»:

Հոդված 4. Օրենքի 18-րդ հոդվածում 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասությամբ.

«Ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանված լինելու և ապահովված իրավունքի առարկայի օտարման դեպքում ապահովված իրավունքի վերաբերյալ գրանցումը շարունակում է ուժի մեջ մնալ` Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225.1-ին հոդվածի 6.3-րդ մասով նախատեսված կանոններին համապատասխան:»:

Հոդված 5. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «որը ենթակա է նոտարական վավերացման» բառերը փոխարինել «Եթե համաձայնություն ներկայացնելու պահանջը նախատեսված է պայմանագրով:»:

Հոդված 6. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 22-րդ հոդվածի 1-ին մասը «գույքի համարը» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարված գրանցումների նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին կետ:	Նախագծի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ օրենսգրքի փոփոխվող 225.1-ին հոդվածի 4-րդ մասը «տնօրինումից, բառից հետո լրացնել «ներառյալ՝ դրանց արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների վրա,» բառերով	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 1-ին հոդվածի 2-րդ կետով (Նախագծի առաջարկվող խմբագրության՝ 1-ին հոդվածի 3-րդ կետ) նոր խմբագրությամբ շարադրվող 225.1 հոդվածի 6.1-րդ մասից հանել «այսմանագրի կնքման պահին» բառերը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

3.	Կառավարություն	Նախագծի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 1-ին հոդվածի 2-րդ կետով (Նախագծի առաջարկվող խմբագրության՝ 1-ին հոդվածի 3-րդ կետ) նոր խմբագրությամբ շարադրվող 225.1 հոդվածի 6.2-րդ մասի 1-ին նախադասությունը «ընդհանուր արժեքը» բառերից հետո լրացնել», եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով» բառերով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում դեպքերում» բառից հետո լրացնել «եթե այլ բան սահմանված չէ օրենքով» բառերը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Չի ընդունվել:
4.	Կառավարություն	«Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին և 3-րդ հոդվածները «ընդհանուր արժեքը» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում) » բառերով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: